ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE7E-A90F-491C-86C7 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/1238/02/26 ք. Երևան
12 Փետրվարի 2026թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով «ԴՈՌՄ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ «ԴՈՌՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Արա Ֆիդանյանի 14.01.2026թ. N 1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

հայցվորի ներկայացուցիչը 04.02.2026 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով այսուհետ նաև՝ Համակարգ հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող ՀՀ ներքին գործերի նախարարության՝ «ԴՈՌՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Արա Ֆիդանյանի 14.01.2026թ. N 1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Ներկայացված հայցադիմումը 06.02.2026 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամայյանին և Համակարգի միջոցով հասանելի է դարձել 09.02.2026 թվականին:
I. Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
II. Հաշվի առնելով, որ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ներքին գործերի նախարարությունից պահանջել ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Հ-50 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
III. Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.9-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. «ԴՈՌՄ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ «ԴՈՌՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Արա Ֆիդանյանի 14.01.2026թ. N 1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. ՀՀ ներքին գործերի նախարարությունից պահանջել ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Հ-50 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,
3. որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում
4. եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026 թվականի մարտի 18-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
5. Պատասխանողին պարզաբանել, որ վիճարկվող որոշման՝ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Արա Ֆիդանյանի 14.01.2026թ. N 1՝ «ԴՈՌՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև այդ որոշման ընդունման՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգի պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Միևնույն ժամանակ պարզաբանել, որ վիճարկվող որոշման իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող են ներկայացվել միայն ապացույցները պահանջելու վերաբերյալ որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատասխանողը հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:
6. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

7. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Ազատ Դունամալյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am